

Պալինդրոմներ երկուական համակարգում

Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Դիտարկենք այն թվերը, որոնք երկուական համակարգում պալինդրոմ են, այսինքն ձախից աջ և աջից ձախ նույն կերպ են գրվում: Օրինակ՝ 1 (1), 3 (11), 9 (1001) : Պահանջվում է գրել ծրագիր, որը տրված n թվի համար արտածի երկուական համակարգում n -րդ պալինդրոմի 10-ական ներկայացումը: Համարակալումը սկսել մեկից համարելով, որ առաջին պալինդրոմը 1-ն է:

Մուտքային տվյալներ

Տրված է մեկ բնական n ($1 \leq n \leq 50000$) թիվ:

Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ՝ n -րդ պալինդրոմը:

Օրինակ

Մուտք	Ելք
1	1
4	7
9	27

Ենթախնդիրներ

- Ենթախնդիր 1 (10 միավոր) $1 \leq n \leq 10$
- Ենթախնդիր 2 (20 միավոր) $1 \leq n \leq 100$
- Ենթախնդիր 3 (70 միավոր) $1 \leq n \leq 50000$